ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԲԱՆԱՎԵՃ «ԱԶԳ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արդեն երկու տարի է, ինչ Մոսկվայում հրատարակվող «Вопросы истории» ամսագրի էջերում բանավեճ է գնում ազգի տեսության կարևոր խնդիրների, այդ թվում և ազգի հասկացության ու տեսակի շուրջը։

Բացելով բանավեճը, ամսագրի խմբագրությունը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Ազգի տեսության մարքսիստական մշակումը սկսվեց 100 տարի սրանից առաջ գիտական կոմունիզմի հիմնադիրների կողմից. այդ տեսության մեջ մեծագույն ներդրում արավ Վ. Ի. Լենինը։ Ազգի տեսությունը հարստացավ ՍՍՀՄ-ի ազգային շինարարության փորձով։ Ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում տեղի ունեցած վիթխարի փոփոխությունները ազգային հարաբերությունների բնագավառում, առանձին ազգերի էվոլյուցիան պահանջում են ազգի տեսության հետագա մշակումը»։

Պետք է նշել, որ այս բանավեճին նախորդել են ազգի տեսությանը վերաբերող մի շարք քննարկումներ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային առընթեր գործող՝ «Ազգային հարաբերությունների զարգացումը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» հանձնաժողովի նիստերում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտներում։ Բացի այդ, վերջին տարիներս հրատարակվել են սովետական հեղինակների մի շարք աշխատություններ, որոնցում լայնորեն արծարծվում են ազգի տեսության կարևոր խնդիրները, այդ թվում՝ սոցիալիստական ազգերի զարգացման օրինաչափությունները և այլն։

Հաշվի առնելով այս բոլորը, «Вопросы истории» ամսագրի խմբագրությունը որոշեց հանդեսի էջերում քննարկման դնել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ էթնիկական ընդհանրությունների էվոլյուցիայի ուղիները, «ազգ», «ազգություն» («народность») հասկացությունների սահմանումը, ազգերի տեսակները, ազգային հարաբերությունների զարգացման դիալեկտիկան սոցիալիզմի կառուցման և սոցիալիզմից կոմունիզմին անցման ժամանակաշրջանում և այլն։

Բանավեճը բացվեց Պ. Մ. Ռոգաչովի և Մ. Ա. Սվերդլինի «Ազգ» հասկացության մասին» վերնագիրը կրող համատեղ հոդվածով։ Առ այսօր բանավեճին մասնակցել են 16 հոգի՝ փիլիսոփաներ, պատմաբաններ, ազգագրագետներ, իրավագետներ, տնտեսագետներ։ Բանավեճի մասնակիցներից 11 հոգի առաջարկել են «ազգ» հասկացության իրենց նոր սահմանումները։

Հայտնի է, որ սկսած նախահոկտեմբերյան շրջանից ընդհուպ մինչև հիսունական թվականների վերջը սովետական մարքսիստական գրականության մեջ անառարկելիորեն տիրապետել է Ի. Վ. Ստալինի կողմից 1913 թ. տրված «ազգ» հասկացության սահմանումը ազգը բնորոշող հանրահայտ չորս հատկանիշներով։ Հայտնի է նույնպես, որ Ի. Վ. Ստալինի այդ աշխատությունը («Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», որը հետագա հրատարակություններով կոչվեց «Մարքսիզմը և ազգային հարցը») ամբողջապես հավանություն ստացավ Վ. Ի. Լենինի կողմից և անվերապահորեն տպագրվեց Վ. Ի. Լենինի խմբագրությամբ լույս տեսնող «Просвещение» հանդեսի 1913 թ. երրորդ համարում։

Հարց է ծագում. կարիք կա՞ր արդյոք նորից անդրադառնալու մինչև այժմ մարքսիստական գրականության մեջ տիրապետած և տասնամյակների ընթացքում համընդհանուր ճանաչում գտած «ազգ» հասկացության այդ սահմանմանը.

Բանավեճի մասնակիցները գտնում են, որ այդ սահմանումը, անշուշտ, խաղացել է իր խոշոր պատմական դերը ազգի տեսության իդեալիստական, հակամարքսիստական կոնցեպցիաների, հատկապես «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» ջատագովների դեմ մղված պայքարում։

Սակայն այն օրերից անցել է կես դարից ավելի։ Կյանքը փոխվել է, ստեղծվել է համաշխարհային սոցիալիստական սիստեմը, բուրժուական հասարակարգի ազգերը մեր երկրում վերափոխվել են սոցիալիստական ազգերի՝ իրենց զարգացման նոր օրինաչափություններով։ Մեր աչքի առաջ, գաղութային սիստեմի փլուզման հետևանքով ազատագրված երկրներում տեղի է ունենում նոր ազգերի կազմավորման պրոցես։ Ազգերի զարգացման ասպարեզում գիտությունը նոր հայտնագործումներ է արել։ Այս

բոլոր հանգամանքները առաջադրում են ազգի տեսության հետագա գիտական մշակման անհրաժեշտություն։

Բանավեճի գրեթե բոլոր մասնակիցները շեշտում են, որ ազգի տեսության պրոբլեմները մշակելիս պետք է ելակետ ունենալ ազգերի առաջացման և զարգացման կոնկրետ պատմական պրոցեսը, իսկ ընդհանրացումներն ու սահմանումները պետք է խարսխված լինեն պատմական իրականության և ոչ թե կյանքից կտրված, մտացածին ու սխոլաստիկ բնույթ կրող ձևակերպումների վրա։ Մարքսիստ-լենինյանները պատմա-տնտեսական մոտեցում ունեն ազգի տեսությանը։ Այդ մոտեցումը հաշվի է առնում ազգերի առաջացումը պատմական որոշ ժամանակաշրջանում, ապա նրանց զարգացումը, որի հիմքում ընկած է տնտեսական գործոնը։ Այստեղից էլ, ի դեպ, բխում է, որ ազգը առաջին հերթին մարդկության պատմության մեջ գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական ընդհանրությունների բարձրագույն և վերջին ձևն է, որին նախորդել է «ազգությունը», իսկ վերջինիս էլ տոհմա-ցեղային էթնիկական ընդհանրությունը։

Կոնկրետ պատմական այս մոտեցմամբ են հագեցած բանավեճին մասնակցած հեղինակների հոդվածները, մասնավորապես Մ. Ս. Ջունուսովի «Ազգը որպես մարդկանց սոցիալ-էթնիկական ընդհանրություն», Ս. Տ. Ղալբաղչյանի «Ազգ» հասկացության հարցի շուրջը», Վ. Ի. Կոզլովի «Ազգի տեսության մի քանի պրոբլեմներ», Լ. Վ. Լուշչովի «Նախազգային էթնիկական կապերի ձևերի մասին», Ա. Գ. Ազանի «Ազգը, նրա էությունն ու ինքնագիտակցությունը» հոդվածները։

Նախ տեսնենք, թե ինչ փոփոխություն են առաջարկում «ազգ» հասկացության մինչ այժմ քաղաքացիություն ստացած չորս հատկանիշների՝ լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և հոգեկան կերտվածքի (կազմվածքի) ընդհանրության նկատմամբ, և թե ինչ նոր հատկանիշներով են ցանկանում լրացնել «ազգ» հասկացության սահմանումը։

Ընդունելով «ազգ» հասկացության սահմանման համար անհրաժեշտ լեզվի, տերիտորիայի և տնտեսական կյանքի ընդհանրության հատկանիշները, բանավեճի գրեթե բոլոր մասնակիցները գտնում են, որ չորրորդ հատկանիշը՝ «հոգեկան կերտվածքի ընդհանրությունը» կարիք ունի արմատական վերանայման։ Հիմնական սկզբունքային առարկությունը այս հատկանիշի դեմ հետևյալն է. կապիտալիստական հասարակարգը տրոհված է հակադիր դասակարգերի՝ շահագործող և շահագործվող, այդ հակադիր դասակարգերի մեջ հոգեբանության, բնավորության, իդեալների մեջ ոչ մի ընդհանրություն չի կարող լինել։ Այստեղից էլ առաջարկ՝ հրաժարվել այդ չորրորդ հատկանիշից առհասարակ (Ս. Տ. Ղալբաղչյան)։

Հիմնականում այս տեսակետն է բաժանում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի էթնոգրաֆիայի ինստիտուտի ղեկավար Վ. Ի. Կոզլովը։ Հոգեկան կերտվածքը, ասում է նա, պայմանավորված է բիոլոգիական և սոցիալական գործոններով։ Բիոլոգիական գործոններ են սեռը, հասակը, խառնվածքը, որոնք կապ չունեն էթնիկական ընդհանրության հետ։ Օրինակ՝ խառնվածքը կապ ունի կլիմայական և ռասայական առանձնահատկությունների հետ. միևնույն գոտում ապրող տարբեր ազգերի մարդիկ կարող են ունենալ նույն խառնվածքը։ Սոցիալական գործոնների մեջ է մտնում նաև էթնիկական միջավայրը։ Անկասկած այդ սոցիալական գործոնները ազդում են մարդկանց բնավորության վրա։ Սակայն դասակարգայնորեն տրոհված հասարակության մեջ, ինչպիսին է բուրժուական հասարակարգը, առաջատար դերը խաղում է այնպիսի սոցիալական գործոն. ինչպիսին է դասակարգային և պրոֆեսիոնալ դրությունը, որը դասակարգային-անտագոնիստական հասարակության մեջ հնարավորություն չի տալիս ստեղծել հոգեկան կերտվածքի ինչ-որ ընդհանրություն։ Ռուս գյուղացին, վաճառականը, չինովնիկը, բանվորը ունեին տարբեր հոգեկան կերտվածք։ Եթե անգամ վերցնենք ռուս գյուղացիներին, ապա ռուս ազգին պատկանող Կուրանի կոզակների հոգեկան կերտվածքը ավելի մոտ է Հյուսիսային Կովկասի ազգերի հոգեկան կերտվածքին, քան հյուսիսային պոմորների, որոնց հոգեկան կերտվածքն էլ իր հերթին ավելի մոտ է հարևան կարելների հոգեկան կերտվածքին։ Գիտնականներին դժվար է բացահայտել հոգեկան կերտվածքի բովանդակությունը,—եզրակացնում է Վ. Ի. Կոզլովը և գտնում, որ ճիշտ կլինի խոսել ոչ թե հոգեկան կերտվածքի ընդհանրության մասին, այլ տվյալ ազգը կազմող առանձին մարդկային խմբերի (դասակարգային, պրոֆեսիոնալ, ազգագրական) հոգեկան կերտվածքի մեջ պատմականորեն առաջացած մի քանի ուրույն առանձնահատկությունների մասին։

Բանավեճի մասնակիցներից ոմանք առաջարկեցին «հոգեկան կերտվածքի ընդհանրությունը» փոխարինել «կուլտուրայի ընդհանրությամբ» (Տ. Յու. Բուրմիստրովա և ուրիշներ)։ Սակայն ուրիշները առարկեցին, որ «կուլտուրա» ասելով հասկացվում է նյութական և հոգևոր մշակույթը, որոնցից առաջինը շատ դիֆերենցված է մեծ ազգի հատվածներում և, ընդհակառակը, շատ նմանություն ունի փոքր ազգերի մեջ։ Մյուս կողմից. նյութական մշակույթի զարգացումը տանում է դեպի նախկինում գոյություն ունեցած

տարբերությունների համահարթեցում և հավասարեցում։ Այսօր չկա ազգ, որի անդամները օգտագործեն միայն «ազգային» արտադրամիջոցներ, հագնեն միայն «ազգային» շորեր, ապրեն միայն «ազգային» բնակարաններում, կերակրվեն միայն «ազգային» ճաշերով։ Ինչ վերաբերում է հոգևոր մշակույթի ընդհանրությանը, ապա նման ընդհանրություն կարող է լինել սոցիալապես միատարր սոցիալիստական ազգերի և ոչ թե անտագոնիստական հասարակության մեջ (բացառությամբ մշակույթի այն տարրերի, որոնք կապ ունեն լեզվի ընդհանրության հետ)։

Բանավեճի ընթացքում որոշ առաջարկներ էլ եղան, թե ինչով փոխարինել «հոգեկան կերտվածքի ընդհանրությունը»։ Այսպես, Մ. Ս. Ջունուսովն առաջարկեց այդ հատկանիշը ձևակերպել այսպես. «Մշակույթի և բնավորության ուրույն ազգային դծերի ընդհանրություն» («Вопросы истории», 1966, № 4, էջ 20)։ Պ. Մ. Ռոզաչովը և Մ. Ա. Սվերդլինը առաջարկեցին «հոգեկան կերտվածքի ընդհանրությունը» փոխարինել «հոգեբանության, կենցաղի, կուլտուրայի տրադիցիաների մի քանի առանձնահատկությունների» ընդհանրությամբ («Вопросы истории», 1966, № 1, էջ 45)։ Ինչպես վերը նշեցինք, Տ. Յու. Բուրմիստրովան առաջարկեց «հոգեկան կերտվածքի ընդհանրությունը» փոխարինել «բնավորության և կուլտուրայի ընդհանրացմամբ»։

Բանավեճի մեջ առանձնակի տեղ էր գրավում ազգային հարցի տեսության վաղեմի մասնագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ի. Պ. Մամերյանի ելույթը։ Նա գտնում է, որ մարքսիստական դրականության մեջ վաղուց ընդունելություն դտած «ազգ» հասկացության սահմանումը իր չորս հատկանիշներով չի կորցրել իր դիտական, տեսական և պրակտիկ-քաղաքական նշանակությունը նաև այսօր և գործոն նշանակություն ունի ինչպես բուրժուական, այնպես էլ սոցիալիստական ազգերի համար։ «Ազգ» հասկացության այդ սահմանումը ոչ մի կարիք չունի ոչ լրացման և ոչ էլ վերանայման, բացի առանձին ճշտումներից։ Այդ ճշտումներից մեկն էլ հենց վերաբերում է «հոգեկան կերտվածքի ընդհանրությանը»։ Ի. Պ. Մամերյանը հիշեցնում է, որ 1929 թ. Ի. Վ. Ստալինը այդ չորրորդ հատկանիշը ձևակերպեց այսպես. «ընդհանրությունը հոգեկան կերտվածքի, որն արտահայտվում է ազգային կուլտուրայի սպեցիֆիկ առանձնահատկությունների ընդհանրությամբ»։ Այս ձևակերպումը, նշում է Ի. Պ. Մամերյանը, վերացնում է 1913 թ. սահմանման պակաս կողմը (այնտեղ խոսվում էր առհասարակ «կուլտուրայի ընդհանրության» մասին)։ Ի. Պ. Մամերյանի կարծիքով 1929 թ. ձևակերպումը կարիք ունի մեկ ճշտման. «հոգեկան կերտվածքի ընդհանրությունը» պետք է փոխարինել «ազգային բնավորության ընդհանուր դծերով» և այն ժամանակ այդ հատկանիշը հետևյալ ձևակերպումը կունենա. «...ազգային բնավորության ընդհանուր դծեր, որոնք արտահայտվում են ազգի կուլտուրայի և կենցաղի ազգային առանձնահատկությունների մեջ» («Вопросы истории», 1967, № 6, էջ 172)։

«Ազգ» հասկացության չորս հատկանիշների ֆորմուլայի դեմ ելույթ ունեցավ Ն. Դ. Անանչենկոն՝ «Ազգից դեպի մարդկանց ինտերնացիոնալ ընդհանրությունը» վերնագիրը կրող հոդվածով։ Նա գտնում է, որ Ի. Վ. Ստալինի սահմանումը իր չորս հատկանիշներով ազգը վեր է ածում ոչ թե պատմական, այլ հավիտենական կատեգորիայի։ Մինչդեռ ազգը դա մարդկանց կոնկրետ-պատմական ընդհանրություն է, որը հաջորդում է «ազգությանը» և ապա փոխակերպվում է մարդկանց ինտերնացիոնալ ընդհանրության։ Նա գտնում է, որ ազգը բնորոշող հատկանիշների (լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և հոգեկան կուլտուրայի ընդհանրության) զարգացումն ու ամրապնդումը սոցիալիզմի և սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում արգելակում են ազգերի առաջընթացը և նրանց փոխակերպումը ինտերնացիոնալ ընդհանրությունների։ Ահա թե ինչու հեղինակը, ելակետ ունենալով ազգի իր սահմանումը, հանձնարարում է հետևյալ ծրագիրը կամ քաղաքականությունը. անհրաժեշտ է ժողովրդի ստեղծագործական գործունեության աստիճանական անցումը այդ ուրույն ազգային ձևերից դեպի ինտերնացիոնալ ռելսերը այն առումով, որպեսզի տվյալ ազգի ներկայացուցիչները ավելի ու ավելի ներգրավվեն միասնական, համամարդկային արժեքների ստեղծմանը, ետևում թողնելով նեղ մտածողության, սոցիալական հարաբերությունների, կենցաղի, տրադիցիաների, սովորույթների նեղ (զարգացման նոր, բարձր փուլի համար) ազգային շրջանակները և բռնելով մարդկանց ինտերնացիոնալ ընդհանրության ճանապարհը։

Ն. Դ. Անանչենկոն քննադատում և չի ընդունում ոչ միայն Ի. Վ. Ստալինի սահմանումը. այլև այն սահմանումները, որոնք տրվել են բանավեճի ընթացքում։ Ի դեպ, նա նշում է, որ հետաքրքրությունից զուրկ չէ այն, որ 1920-ական թթ. Ի. Վ. Ստալինը լրացման կարգով տվեց բուրժուական և սոցիալիստական ազգերի տարբերությունը, ազգային կյանքի սոցիալ-քաղաքական կողմը դրեց առաջին պլանի վրա և որ դրանով իսկ «1913 թ. ազգի սահմանումը կորցրեց իր ունիվերսալ ձևը» («Вопросы истории», 1967, № 3, էջ 84)։

Հիմա անդրադառնանք այն հարցին, թե ինչ լրացումներ առաջադրվեցին բանավեճի ընթաց-

քում և «ազգ» հասկացության ինչ նոր հատկանիշներ առաջարկվեցին։

Ուշադրության արժանի են երկու առաջարկներ. առաջին՝ ազգային պետականությունը մրտցրնել «ազգ» հասկացության, մասնավորապես սոցիալիստական ազգի հատկանիշների մեջ։ Այս առաջարկությամբ հանդես եկավ Մ. Օ. Մնացականյանը «Ազգը և ազգային պետականությունը» հոդվածում («Вопросы истории», 1966, № 9, էջ 27—33)։ Հենվելով պատմական փորձի վրա, ուսումնասիրելով ազգային շարժումները, մասնավորապես մեր դարի ազգային-ազատագրական շարժումներն ու սոցիալիստական ազգերի առաջացումն ու զարգացումը և վկայակոչելով Կ. Մարքսին, Ֆ. Էնգելսին և Վ. Ի. Լենինին, հեղինակը անում է այն հետևությունը, որ ազգային պետականությունը ոչ միայն խոշոր նշանակություն ունեցող պրոգրեսիվ գործոն է, որը նպաստում է ազգային համախմբմանը, այլև «ազգի կարևոր բաղկացուցիչ տարրն է», նրա էությունը բնորոշող, նրա «իմաստ, ներունակ հասկացությունը»։ Այս հանգամանքը հաշվի առնելով հեղինակն առաջարկում է ազգի հետևյալ բնորոշումը. «Ազգը — դա պատմականորեն առաջացած կայուն ընդհանրություն է մարդկանց, որոնք ունեն ընդհանուր լեզու, ընդհանուր տերիտորիա, ընդհանուր տնտեսական կապեր և ընդհանուր պետական կառուցվածք» (էջ 35)։ Իսկ սոցիալիստական ազգը, նրա կարծիքով, մարդկանց պատմական ընդհանրությունն է, որը առաջ է եկել իր պետականության շրջանակներում լեզվի, տերիտորիայի, սոցիալ-տնտեսական, գաղափարական և կուլտուրական կյանքի ընդհանրության հիման վրա»։

Մենք հնարավորություն չունենք ավելի ծավալուն և խորը շարադրելու այս լրացումը։ Նշենք միայն, որ Մ. Օ. Մնացականյանի այս առաջարկը պաշտպանություն գտավ Պ. Մ. Ռոգաչովի. Մ. Ա. Սվերդլինի, Մ. Ս. Ջունուսովի, Ս. Տ. Ղալբաղչյանի, Վ. Ի. Կոզլովի, Ա. Գ. Ազանի կողմից։

Այդ առաջարկի դեմ արտահայտվեցին Ի. Պ. Մամերյանը, Տ. Յու. Բուրմիստրովան և Պ. Գ. Սեմյոնովը։

Բանավեճի ժամանակ արված երկրորդ լրացումը վերաբերում է ազգային ինքնագիտակցության գործոնին՝ որպես «ազգ» հասկացության հատկանիշի։

Պ. Մ. Ռոգաչովն ու Մ. Ա. Սվերդլինը առաջարկեցին ազգի հատկանիշների մեջ մտցնել նաև «էթնիկական պատկանելության ինքնագիտակցության ընդհանրությունը» («Вопросы истории», 1966, № 1, էջ 45)։ Պաշտպանելով այս առաջարկությունը, Մ. Ս. Ջունուսովը գտավ, որ այն պետք է ձևակերպել որպես «ազգային ինքնագիտակցության ընդհանրություն» («Вопросы истории», 1966, № 2, էջ 20). «Ազգի զարգացումը,— նշում է նա,— իր արտահայտությունն է գտնում ոչ միայն արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքի մեջ, նրա դասակարգային կառուցվածքի առաջընթացի փոփոխության մեջ, ազգային պետականության ամրապնդման մեջ, այլև լեզվի, ազգային ինքնագիտակցության, ազգային հպարտության և այլնի զարգացման մեջ» (նույն տեղում, էջ 29)։

Վկայակոչելով Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին, Ս. Տ. Ղալբաղչյանը գտնում է, որ «ազգային գիտակցությունը ոչ թե միայն «ազգային պատկանելության զգացմունք կամ գիտակցություն է, այլ ավելի խոր և ազգի ճակատագրի համար երբեմն վճռական նշանակություն ունեցող գործոն («Вопросы истории», 1966, № 6, էջ 30)։ «Օտար ազգերի ճնշումից կամ ազգի գոյությանը սպառնացող վտանգից առաջացած, ծնունդ առած ազգային զգացմունքը յուրաքանչյուր ազգի զարգացման և ամրապնդման ասպարեզում գրական դեր է խաղում։ Այդ զգացմունքները ստանում են գիտակցված բնույթ ժողովրդի՝ հանուն ազատության և անկախության մղած կոնկրետ պայքարում։ Ազգային-ազատագրական շարժումներում ամրանում և զարգանում է ազգային գիտակցությունը՝ դառնալով ազգի բնավորության գծերից մեկը։ Պատմական որոշ շրջաններում ազգային գիտակցությունը համախմբում է ազգային բոլոր ուժերը, թեև դասակարգերից ամեն մեկը, նույնիսկ օտար ճնշումների դեմ մղած մահացու ընդհարումների ժամանակ, դրսևորում է իրեն՝ համապատասխան իր դասակարգային էության» (նույն տեղում)։ Մի այլ տեղ Ս. Տ. Ղալբաղչյանը նշում է. «Ազատության, անկախ գոյության համար մղված պայքարում կազմավորվեց ազգային գիտակցությունը՝ ուղղված ազգային պետականության նվաճմանը կամ այդ պետականության պահպանմանն ու կայունացմանը, ամրապնդմանը» (նույն տեղում. էջ 31)։

Ոգևունելով «ազգային ինքնագիտակցության» ընդհանրության հատկանիշի մուծումը ազգի հատկանիշների շարքը, Ի. Ի. Կուզմինկովը գրտնում է, որ «էթնիկական պատկանելության ինքնագիտակցությունը», «ազգային ինքնագիտակցությունը տերիտորիայի, լեզվի և անգամ տընտեսական ընդհանրության միասնության ուրույն հետևանք չի հանդիսանում։ Ազգային գիտակցությունը երկարատև պատմական զարգացման արգասիք է և ունի զարգացման իր հարաբերական ինքնուրույնության տրամաբանությունը։ Հարկավ. էթնիկական պատկանելության ինքնագիտակցությունը երկրորդային գործոն է. նա առաջացել է որպես մարդկանց էթնիկական ընդհանրության արտացոլում։ Հանրահայտ է սակայն,

որ նա ունի հարաբերական ինքնուրույնություն և, ինչպես Լենինն է ասել, ոչ միայն արտացոլում է օբյեկտիվ աշխարհը, այլև ստեղծում է այն։ Էթնիկական պատկանելության ինքնագիտակցությունը,— շարունակում է Ի. Ի. Կուզմինկովը,— պահպանվում է և ազդում մարդկանց գործունեության և վարմունքի վրա տասնյակ և հարյուրավոր տարիների ընթացքում, անգամ այն բանից հետո, երբ մարդիկ կորցրել են փաստական կապերը ազգի հետ, ապրում են ուրիշ երկրներում, խոսում են ուրիշ լեզուներով։ Ամեն տարի Սովետական Միություն են վերադառնում հարյուրավոր հայեր, ուկրաինացիներ, ռուսներ, բելոռուսներ, մեր երկրի այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք պատմական ճակատագրի բերումով ժամանակին ընկել էին օտար երկրներ։ Ազգային ինքնագիտակցությունը համախմբում, ցեմենտում է ազգը, նպաստում է ազգի կայունացմանը։ Տիրապետելով մարդկանց մտքերին՝ ազգային ինքնագիտակցությունը դառնում է հուժկու նյութական ուժ։ Այս դրույթի համոզիչ փաստարկը Ասիայի, Աֆրիկայի ազգային-ազատագրական շարժումներն են և գաղութային սիստեմի փլուզումը» («Вопросы истории», 1966, № 12, էջ 114)։

Վ. Ի. Կոզլովը նույնպես գտնում է, որ ազգային ինքնագիտակցությունը, անկասկած, հանդիսանում է ազգի կարևոր հատկանիշը, որն արդեն ճանաչում է ստացել սովետական ազգագրական գիտության մեջ և լայնորեն օգտագործվում է պրակտիկայում ազգարնակչության ազգային պատկանելությունը որոշելիս, օրինակ՝ մարդահամարների ժամանակ, ըստ որում այս դեպքում լեզվական հատկանիշները երկրորդ տեղն են բռնում։ Ազգային ինքնագիտակցությունը,— նշում է Վ. Ի. Կոզլովը,— գա հասարակական գիտակցության մի տեսակն է։ Նա առաջանում է և զարգանում տվյալ ժողովրդի պատմական զարգացման օբյեկտիվ ընթացքի և պատճառների ազդեցության տակ և ավելի մեծ դեր է խաղում ժողովրդի կյանքում, քան «հոգեկան կերտվածքի» հատկանիշը։ Այլ դաղափարախոսական ձևերի նման, ազգային ինքնագիտակցությունն էլ օժտված է որոշ ինքնուրույնությամբ։ Ինչո՞ւմն է արտահայտվում այդ ինքնուրույնությունը։ Առաջին՝ ազգային ինքնագիտակցությունը, տվյալ ազգին պատկանելու զգացմունքը իր գոյությունը շարունակում է պահպանել անգամ այն դեպքում, երբ ազգը բնորոշող այլ հատկանիշներ բացակայում են, կամ ժամանակավորապես խախտված են (օրինակ, բացակայում է տերիտորիալ ընդհանրությունը, խախտված է տնտեսական կյանքի ընդհանրությունը)։ Երկրորդ՝ ազգային ինքնագիտակցությունը կարող է աճել, ուժեղանալ գաղավարների ազդեցության տակ անգամ այն դեպքում, երբ բացակայում են նյութական նախադրյալները (օրինակ՝ տերիտորիալ և տնտեսական ընդհանրությունների հատկանիշները)։ Հասնելով զարգացման որոշ աստիճանի, նա ընդունակ է ի հայտ բերել հակառակ ազդեցությունը իրեն առաջադրված գործոնների վրա։ Նման հակազդեցության վառ օրինակներ են հանդիսանում ազգային տերիտորիաների վերամիավորման շարժումները (օրինակ, լեհերի շարժումը XVIII և XX դդ. սկզբներին), մայրենի լեզվի վերահաստատման, վերածննդի և զարգացման շարժումները XIX դարում չեխերի մոտ, XX դարում՝ իռլանդացիների մոտ և այլն։

Ընդհանուր առմամբ, եզրափակում է Վ. Ի. Կոզլովը, որպես մարդկանց ընդհանրության առանձին, հատուկ ձև՝ ազգը բավականաչափ ռեալ իրեն դրսևորում է միայն այն դեպքում, երբ նրա անդամների մեջ զարգացած է ազգային ինքնագիտակցությունը։ Իսկ այն դեպքում, երբ ազգային ինքնագիտակցությունը թույլ է զարգացած, երբ առաջացող ազգային մտավորականությունը կամ այն պետության գործիչները, որի սահմաններում ձևավորվում է ազգը, փորձում են դեռևս զարգացնել նրան, ապա նման ազգի գոյությունը կասկածի տակ է դրվում («Вопросы истории», 1967, № 1, էջ 92)։

Ն. Ա. Թավաքալյանը նույնպես գտնում է, որ ազգի հատկանիշների մեջ պետք է մտցնել «էթնիկական պատկանելության ինքնագիտակցությունը», որովհետև դա իրական է, հավասարապես հատուկ է տվյալ ազգը կազմող բոլոր մարդկանց համար՝ առանց դասակարգային և դասային տարբերության։ Ավելին,— ասում է Ն. Ա. Թավաքալյանը,— ազգային ինքնագիտակցությունը հանդես է գալիս որպես ավելի կայուն, ամուր գործոն, քան անգամ մայրենի լեզուն («Вопросы истории», 1967, № 2, էջ 117)։

Բանավեճին մասնակցած գիտնականներից Ի. Պ. Ծամիրյանն էր, որ դեմ արտահայտվեց ազգային ինքնագիտակցությունը ազգի հատկանիշներից մեկը համարելուն։ Վերը հիշատակած իր հոդվածում նա հետևյալ կերպ հիմնավորեց իր բացասական դիրքը. «Էթնիկական պատկանելության գիտակցությունը կամ ազգային ինքնագիտակցությունը դա լոկ սուբյեկտիվ արտացոլումն է մարդու գիտակցության մեջ իր իսկ ազգի՝ ազգային ընդհանրության գոյության օբյեկտիվ փաստի։ Չի կարելի սուբյեկտիվ արտացոլումը (գիտակցության մեջ) գարձնել արտացոլող օբյեկտի (ազգի) հիմնական հատկանիշներից մեկը» («Вопросы истории», 1967, № 6, էջ 111)։ Ի. Պ. Ծամիրյանը չի քննարկում ու քննադատում իր հակառակորդների փաստարկները։ «Ազգային ինքնագիտակցության» հատկա-

նիշի կողմնակիցները նույնպես գտնում են, որ «էթնիկական ինքնագիտակցությունը», «ազգային ինքնագիտակցությունը», անշուշտ, օբյեկտի արտացոլումն է գիտակցության մեջ, բայց քանի որ այդ օբյեկտը մարդկանց ընդհանրություն է, և այդ գիտակցությունը հատուկ է մարդկային տվյալ ընդհանրության բոլոր անդամներին, ապա այդ արտացոլման բովանդակությունը, այսինքն ազգային ինքնագիտակցությունը կարող է վերածվել օբյեկտի հատկանիշի, նրան բնութագրող հատկանիշի։

«Ազգային ինքնագիտակցության ընդհանրության» հատկանիշը, որպես ազգի էական հատկանիշ, ընդունեց և հիմնավորեց իր ուշագրավ հոդվածում Ա. Գ. Ազաևը՝ իր «Ազգը, էությունը և ինքնագիտակցությունը» հոդվածում («Вопросы истории», 1967, № 7, էջ 87—104)։ Նա հարցին մոտեցավ պատմականորեն և փորձեց բացահայտել ազգի՝ որպես էթնիկական ընդհանրության զարգացման ձևին նախորդող և նույնպես էթնիկական ընդհանրություններ հանդիսացող տոհմա-ցեղային միության և «ազգության» էթնիկական գիտակցության բնույթը և դրսևորումները։ Նրա կարծիքով, արդեն տոհմա-ցեղային էթնիկական միավորումների անդամները գիտակցում էին իրենց սերտ կապը, որը հիմնվում կամ խարսխվում էր արյունակցական կապի վրա, միասնական ծագման և անձնական ծանոթության վրա։ Պատմական զարգացման որոշ փուլում, մանավանդ պատմության վաղ դասակարգային շրջանում, ցեղային գիտակցությունը տեղի է տալիս «ազգության» գիտակցության, որն արդեն հիմնվում, խարսխվում էր լեզվի և տերիտորիայի ընդհանրության վրա, այլ ոչ թե արյունակցական, միասնական ծագման և անձնական ծանոթության վրա։ «Ազգության» էթնիկական գիտակցությունը չի կարելի ընկալել որպես ինչ-որ կայունացած մի բան, որովհետև նա արտացոլում է «ազգության» էթնիկական տրոհվածությունը, էթնիկական խմբերի պահպանումը իր ներսում։ «Ազգային ինքնագիտակցությունը» օրգանապես ընդունում է իր մեջ էթնիկական գիտակցությունը, այսինքն տվյալ ընդհանրությանը պատկանելու գիտակցությունը, սակայն չի սահմանափակվում կամ չի սպառվում դրանով, ինչպես ենթադրում են Պ. Մ. Ռոզաչովը և Մ. Ա. Սվերդլինը։ Ազգային ինքնագիտակցությունը նոր որակ է և խորհրդանշում է «ազգությունից» դեպի «ազգ» անցման պատմական պրոցեսը։ Դա անցումն էր տեղական գոյից ազգային գոյի և զուգակցվում էր մտահորիզոնի լայնացմամբ, «հայրենիք» և «հայրենի հող» հասկացությունների առաջացմամբ, ողջ ազգի առաջ քաղաքացիական պարտավորությունների գիտակցմամբ։ Այդ պրոցեսը (ազգային ինքնագիտակցության առաջանալը) յուրահատուկ մեծագույն հեղափոխություն էր, որովհետև նրա բովանդակությունն էր «ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնքը, պայքարը ամեն մի ազգային ճնշման դեմ, ազգային պետությունների ստեղծումը» (Լենին, Երկեր, հատ. 24, էջ 124, ռուս. 5-րդ հրատ.)։ Ապա բերելով «Կոմունիստական մանիֆեստի» այն տեղը, որն արտահայտում է այդ պրոցեսը (մեկ ազգ, մեկ կառավարությամբ, մեկ օրենսդրությամբ, մեկ ազգային դասակարգային շահով, մեկ մաքսային սահմաններով), Ա. Գ. Ազաևը այն հետևությունն է անում, որ, ի տարբերություն էթնիկական ընդհանրությունների, այդ թվում և «ազգության», պատմության մեջ «ազգը» հանդես է գալիս որպես ինքնուրույն ստեղծագործ ուժ։ Վերջինս արտացոլվում է ազգի անդամների, ազգի դասակարգերի գիտակցության մեջ։ «Սակայն ազգի ստեղծագործ ուժի գիտակցությունը չի մնում մեռած, օբյեկտիվ իրականության պատճեն։ Այդ գիտակցությունը վեր է ածվում ստեղծագործ ուժի»։

Ազգի մյուս հատկանիշները (լեզուն, տերիտորիան, տնտեսական և կուլտուրական կյանքի ընդհանրությունները) նույնպես մեռած տարրեր չեն, իներտ չեն, պասսիվ կատեգորիաներ չեն, այլ ազգի կենդանի բաղադրիչներ, որոնք առաջ են բերում ազգային կյանք, սրբագործվում են ազգային և ազգային-ազատագրական շարժման ընթացքում, գիտակցվում են և զարգանում։ Այդ բոլորը հենց ազգային ինքնագիտակցության զարթոնքն է։

Իրոք, նշում է Ա. Գ. Ազաևը, թեև այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հայրենասիրությունը և ինտերնացիոնալիզմը, ազգային հպարտությունն ու պատիվը, նացիոնալիստական և շովինիստական հայացքները ձևավորվում են ազգային ինքնագիտակցության թաղանթով, հասարակական գիտակցության այս տեսակը (այսինքն ազգային ինքնագիտակցությունը) երկար ժամանակ մնում էր սովետական գիտնականների տեսադաշտից դուրս։ «Ազգի իրրև «ազգային ինքնագիտակցության արգասիք» կամ «ազգային հոգու հետևանք» — իդեալիստական կոնցեպցիաների դեմ մղած պայքարում մենք անխտրելիորեն մեր բացասումը տարածեցինք նաև ինքնագիտակցության վրա, ժխտեցինք ինքնագիտակցության գոյությունը և գերը։ Ազգի և իր գիտակցության փոխադարձ կապի խորը վերլուծման փոխարեն, մենք գնացինք հեշտ ճանապարհով, ազգին զրկեցինք նրա շատ բարդ, ուրույն, միայն իրեն հատուկ հատկանիշից՝ իր գոյի գիտակցությունից» («Вопросы истории», 1967, № 7, էջ 101—102)։

Ա. Ֆ. Ագաևը ընդգծում է, որ իդեալիստական փիլիսոփայությունը և սոցիոլոգիան ֆետիշացնում են ազգային ինքնագիտակցության ստեղծագործ ուժը՝ կտրելով նրան իրականությունից, այն օբյեկտից, որի արտացոլումն ու ծնունդն է նա։ Ավելին՝ բուրժուական գաղափարախոսությունը «ազգը» դուրս է բերում «ազգային ինքնագիտակցությունից» ասելով, թե այդ ինքնագիտակցությունը իրենից ներկայացնում է ազգի բոլոր դասակարգերի խնդիրների, շահերի, աշխարհայեցողության միասնությունը։ Մինչդեռ մարքսիզմի համար ազգային ինքնագիտակցությունը դա դասակարգերի, անհատների իմացումն է ազգի՝ որպես կապիտալիստական և սոցիալիստական դարաշրջանների հասարակական զարգացման անխուսափելի ձևի, որպես համաշխարհային արենայում հանդես եկած ինքնուրույն ուժի։ Ազգային գիտակցությունը միաժամանակ արտահայտում է մարդու վերաբերմունքը (այն դասակարգի միջոցով, որին նա պատկանում է) դեպի ազգը։

Ա. Ֆ. Ագաևը ազգի էությունը տեսնում է դեպի ինքնուրույնությունը, դեպի սուվերենիտետը նրա ձգտման մեջ։ Ելակետ ունենալով այս բոլորը, նա առաջարկում է «ազգ» հասկացության հետևյալ սահմանումը. «Ազգը դա կապիտալիստական և սոցիալիստական դարաշրջանների էթնիկական ընդհանրություն է (որը բնութագրվում է լեզվի, տերիտորիայի, տնտեսության, կուլտուրական կյանքի և ազգային ինքնագիտակցության ընդհանրությամբ)՝ արթնացած ինքնուրույն ազգային կյանքի, սուվերենիտետի»։ Հեղինակը նշում է, որ ազգի սահմանման այս բովանդակությունն է նշում XXII համագումարի կողմից ընդունված նոր ծրագիրը։

Բանավեճի ընթացքում քննարկվեց նաև ազգի տեսակի հարցը։ Պ. Մ. Ռոգաչովը և Մ. Ա. Ավերոլիևը առաջարկեցին հրաժարվել «բուրժուական ազգ» և «սոցիալիստական ազգ» սահմանումներից և ընդունել երեք տեսակի ազգեր՝ սոցիալական անմիատարր, միատարր և անցողիկ ազգեր։ Նրանք գտնում են, որ «բուրժուական ազգ» հասկացությունը ազգին բնութագրում է նախ՝ միակողմանի և պարզունակ ձևով, ազգը վերածելով միայն արտադրական հարաբերությունների և մի կողմ թողնելով ազգի հատկանիշների փոխհարաբերությունների դիալեկտիկան ու ազգի հարաբերական ինքնուրույնությունը։ Երկրորդ «բուրժուական ազգ» հասկացությունը երկիմաստ է, որովհետև դրա գործածումը հնարավորություն է տալիս չափազանցելու բուրժուազիայի դերը ազգային կյանքում և կարող է սխալ եզրակացությունների բերել։ Այս առաջարկության դեմ շատերն արտահայտվեցին։ Հիմնական առարկությունն այն է, որ ազգերի պատմական տեսակը պայմանավորվում է հասարակության մեջ տիրապետող արտադրական հարաբերություններով։ Այնուհետև, բուրժուական ազգի կյանքում գերակշռող դիրքը գրավում է բուրժուազիան, նրա քաղաքականությունը և գաղափարախոսությունը։ Վերջապես, «բուրժուական ազգ» հասկացությունը նույնչափ օրինական է, որչափ «բուրժուական հասարակություն» հասկացությունը։ Բուրժուական ազգը բոլորովին էլ չի բացասում, այլ ընդհակառակը, դրսևորում է տվյալ ազգի անտագոնիստական սոցիալական կառուցվածքը (երկու ազգ — երկու կուլտուրա), սոցիալիստական ազգերը սոցիալապես միատարր չեն։ Միատարրությունը կստեղծվի կոմունիզմի ժամանակ։

«Ազգ» հասկացության շուրջը ծավալված այս բանավեճը պատահականության արդյունք չէր, այլ՝ կյանքի պահանջ։ Մեր դարաշրջանը անխուսափելիորեն առաջադրում է ազգերի, այդ թվում և սոցիալիստական ազգերի հետագա զարգացման ուղիների և կոնկրետ հեռանկարների հարցը։ Իսկ դրա լուծման համար պետք է հստակ պատկերացում ունենալ «ազգ» հասկացության էության մասին, այդ թվում և սոցիալիստական ազգերի էության մասին։

Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՎԱՆ ԱՄՐՈՑԻ 1963 ԵՎ 1965 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Գառնիի հնագիտական արշավախմբի ջոկատը իր աշխատանքները շարունակեց Հայավանի հին ամրոցում, նպատակ ունենալով ուսումնասիրել ամրոցի տերիտորիան և պարսպի հարավային հատվածը[1]։ Ամրոցում կատարված հետախուզական աշխատանքների և սիստեմատիկ պեղումների առաջին տարիների ընթացքում պարզվել է

1 Պեղումներին մասնակցել են Համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողներ Գ. Զարիբյանը և Հ. Ամմարյանը (1963 թ.) և հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ասպիրանտ Ա. Քալանթարյանը (1965 թ.)։ Չափագրական աշխատանքները կատարել է ճարտարապետ Կ. Զաքարյանը, լուսանկարչական աշխատանքները՝ Գ. Ժամկոչյանը և Ա. Շահինյանը։